



Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանին  
«Ռադիո Ավրորայի» լրագրող Անժելա Հարությունյանից

**Տեղեկություն ստանալու հարցում**

Հարգելի պրն Մաթևոսյան,

Մեզ են դիմել Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի բնակիչները: Քաղաքացիները նշում են, որ երկար ժամանակ լուծում չի ստանում համայնքում խմելու ջրի հարցը: Նրանց խոսքով՝ տարիներ առաջ ջրագծերն անցկացրել են, սակայն աշխատանքը թերի է կատարվել այդ պատճառով էլ մինչ օրս ունեն խմելու ջրի խնդիր:

Բնակիչները նշեցին, հետո մենք էլ տեղում տեսանք, որ համայնքի ճանապարհներն անմխիթար վիճակում են, չկա լուսավորության համակարգ:

Նրանց խոսքով՝ տարիներ շարունակ իրենց ձայնը լսելի չի եղել և այդ պատճառով էլ պատրաստվում են բողոքի ակցիա անցկացնել:

Խնդրում ենք նշել, թե առաջիկայում նախատես<sup>ո</sup>ւմ եք որևէ ծրագրի շրջանակում լուծել համայնքում ջրի խնդիրը, ճանապարհների և լուսավորության հարցը:

Խնդրում ենք նամակի պատասխանել կնիքով եւ ստորագրությամբ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու

գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք

պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և

ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և

հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել

հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ

14. 09. 2020



**RADIO AURORA**

📍 Նաիրի Զարյան 22 ա

✉ [info@radioaurora.am](mailto:info@radioaurora.am)

☎ +374 91 251007, +374 11 211007

🌐 [www.radioaurora.am](http://www.radioaurora.am)